

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Մաթեմատիկան և բարոյական
արժեքները

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Մանուկյան Անահիտ

Ուսումնական հաստատություն՝ «ՀՀ Արարատի մարզի
Շահումյանի Ա.Համբարձումյանի անվան միջնակարգ
դպրոց»

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
ԳԼՈՒԽ 1. Մաթեմատիկան և բարոյական արժեքները.....	5
Եզրակացություն.....	15
Օգտագործված գրականության ցանկ.....	17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Սովորողների բարոյական արժեքների ձևավորումը մաթեմատիկայի ուսուցման գործընթացի հիմնական նպատակներից մեկն է:

Այն կյանքի կոչելու գործում, նախևառաջ, մեծ նշանակություն ունի մաթեմատիկայի կրթական այն ներուժի բացահայտումը, որը կնպաստի սովորողների բարոյական արժեքների ձևավորմանը:

Մաթեմատիկայի ուսուցման գործընթացի հիմնական նպատակներից մեկը մաթեմատիկական փաստերի և մեթոդների յուրացումն է, ինչը նպատակաուղղված է հոգևոր ուժերի զարգացմանը:

Մաթեմատիկայի ուսումնական ծրագրերը ներառում են ձևական տրամաբանության մի շարք կարևորագույն և առանցքային հարցեր, որոնք նույնպես կազմում է հոգևոր ուժերի մաս, իսկ դրանց ուսուցումը նպաստում է հոգևոր ուժերի զարգացմանը:

Գիտության այլ բնագավառներում, ժամանակակից տեխնիկայի մեջ ունեցած կիրառություններով նույնպես մաթեմատիկան և նրա ուսուցման գործընթացը նպաստում են մարդու հոգևոր ուժերի զարգացմանը:

Մաթեմատիկան լայն կիրառություն ունի ճարտարապետության, քանդակագործության, նկարչության և արվեստի այլ բնագավառներում, ինչը նույնպես նրա ուսուցումը դարձնում է մարդու հոգևոր ուժերի զարգացման կարևոր միջոց:

Մաթեմատիկայի դասավանդման գործընթացը կարիք ունի ուղղորդվելու դեպի մարդկանց մարդասիրական պարտքի իրականացում, ինչին կարող է խանգարել այդ գործընթացում մարդկանց մտավոր գործունեության համար անհավասար պայմանների ստեղծումը:

Աշխատանքի նպատակը: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել մաթեմատիկան և բարոյական արժեքները:

Աշխատանքի մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք հեղինակների կողմից իրականացված հետազոտությունները, հրապարակված գիտական աշխատությունները և դրանցում ներկայացված տեսակետները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, մեկ գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքային տեքստը կազմում է 17 տպագրական էջ:

ԳԼՈՒԽ 1. ՄԱԹԵՄԱՏԻԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Սովորողների դաստիարակության իրականացումը միշտ էլ եղել ու մնում է կրթության կարևորագույն խնդիրներից մեկը: Ճիշտ է, ժամանակակից արևմտյան կրթական մոտեցումներում դաստիարակության խնդիրը փոխարինվում է արժեքների ձևավորման խնդրով, բայց դրանից հարցի էություն չի փոխվում: Մակայն այդ մոտեցումներում կտրուկ փոխվել են շեշտադրումները, որոնց առանցքը կազմում է կրթության նոր հարացույցը, ավտորիտար համակարգերին հատուկ գիտելիքի տիրապետմանն ուղղված կրթությանը գալիս է փոխարինելու ժողովրդավարական համակարգերին հատուկ՝ արժեքների ձևավորմանն ուղղված կրթությունը: Եթե ավտորիտար համակարգերում կարևորվում է գիտելիքը, որովհետև այն հնարավորություն է տալիս պատրաստելու պետության և հասարակության այս կամ այն խնդիրը, պահանջը իրականացնելուն ունակ մասնագետ, ապա ժողովրդավարական համակարգերում հիմնական արժեքը մարդն է, որի բարօրությունը համարվում է գերակա խնդիր: Եվ ադ բարօրությունը պայմանավորվում է մարդու արժեքների աշխարհով, արժեքային կողմնորոշումով:

Հարկ է նշել, որ հանրակրթության պետական կրթակարգում և հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչներում որոշակի ուշադրություն է դարձվում բարոյական արժեքներին¹:

Բարոյական արժեքների ձևավորման հսկայական ներուժ ունեն հանրակրթական դպրոցի «Մաթեմատիկա» ուսումնական բնագավառի առարկաները:

Պարտքի, պարտականությունների նկատմամբ մարդու վերաբերմունքը արտահայտվում է պատասխանատվությամբ: Պատասխանատվության ավելի թույլ ձևերն են պարտքի հանդեպ ցուցաբերվող լրջությունը, բարեխղճությունը, հոգատարությունը, շահագրգռվածությունը, հետաքրքրությունը²:

¹ Զ. Ա. Միքայելյան, Բարոյական արժեքները և մաթեմատիկայի ուսուցման գործընթացը, բարին, չարը, պորպորոջ ունը, Աթենաիկան դպրոցում, N3, 2010, էջ՝ 45:

² Զ. Ա. Միքայելյան, Բարոյական արժեքները և մաթեմատիկայի ուսուցման գործընթացը, բարին, չարը, պորպորոջ ունը, Աթենաիկան դպրոցում, N3, 2010, էջ՝ 45:

Պատասխանատվության հակադրությունը անպատասխանատվությունն է, որի ավելի թույլ ձևերն են թեթևամտությունը, անտարբերությունը, անբարեխղճությունը, անհոգությունը, անփութությունը: Կրթության գործընթացի լիարժեք իրականացման համար անհրաժեշտ են թե՛ ուսուցչի, թե՛ աշակերտի կողմից այս ուղղությամբ իրենց ունեցած պարտքի կատարման հանդեպ պատասխանատվության համապատասխան դրսևորումներ:

Բնականաբար, գործընթացի առաջին և հիմնական պատասխանատուն ուսուցիչն է, որը կրում է նաև աշխատանքային պարտավորություններ: Սակայն ուսուցչի աշխատանքային պարտավորությունների իրականացումը, եթե խոսքը վերաբերում է բարոյական դաստիարակությանը, մասնավորապես՝ նրա պարտքին վերաբերող գործառույթների իրականացմանը, չափազանց բարդ գործընթաց է: Հիմնական բարդությունը կայանում է դրանց ոչ հստակության, դժվար վերահսկելիության և սպասվելիք արդյունքների ստուգման ու գնահատման դժվարության կամ անհնարինության մեջ: Իսկապես, եթե սովորողի մոտ գիտելիքի կամ կարողության առկայությունը կարելի է ստուգել, գնահատել և վերահսկել բանավոր կամ գրավոր հարցման միջոցով, ապա բարոյական այս կամ այն որակի առկայությունը կարելի է ստուգել միայն այնպիսի իրադրության պայմաններում, որտեղ այդ որակը հնարավորություն ունի դրսևորվելու: Եվ դրսևորվելու դեպքում էլ ստուգվողը կարող է դիտավորյալ չցուցաբերել այդ որակը, կեղծել, եթե դա իրեն ձեռնտու չէ: Միաժամանակ, ուսուցիչը դաստիարակչական խնդիրները իրականացնելու շահագրգռվածություն և կոնկրետ պայմանագրով ամրագրված պարտավորություն չունի, իսկ չկատարված աշխատանքի համար էլ պատասխանատվություն չի կրում: Եվ դաստիարակության ամբողջ խնդիրը, ըստ էության, հանգում է ուսուցչի բարոյական մոտեցմանը. ինչքանով է նա կատարում ուսուցիչ լինելու իր առաքելությունը, որը առաջին հերթին դաստիարակ է:

Ավելի նուրբ է աշակերտի կողմից կրթական խնդիրների իրականացման հարցում պատասխանատվության դրսևորման հարցը: Ի տարբերություն ուսուցչի, աշակերտը կարող է նաև չգիտակցել իր պատասխանատվությունը, մանավանդ՝ երբ խոսքը վերաբերում է դաստիարակության այնպիսի նուրբ ոլորտին, ինչպիսին պարտքին վերաբերող խնդիրներների իրականացումն է: Եվ այստեղ ուսուցչի

պարտականություններին ավելանում է նաև աշակերտի մոտ համապատասխան գիտակցության ձևավորման խնդիրը:

Մաթեմատիկայի դասավանդման գործընթացը այս ուղղությամբ պահանջում է ավելի մեծ ու լրացուցիչ ջանքեր թե՛ ուսուցչի, թե՛ աշակերտի կողմից: Թեթևամտության, անտարբերության, անբարեխղճության, անհոգության և անփութության յուրաքանչյուր դրսևորում կարող է ձախողել ուսումնական նյութի յուրացումը, ինչը բացասաբար կանդրադառնա նաև այդ նյութից կախված հետագա թեմաների յուրացման վրա:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ մաթեմատիկական նյութի յուրացումը անհնար է պատկերացնել առանց պատասխանատվության և նրա հետ կապված՝ վերը նշված որակների դրսևորման, և, հետևապես, մաթեմատիկայի դասավանդման գործընթացը մեծապես կարող է նպաստել այդ որակների ձևավորմանը:

Մարդու՝ որպես կենդանի էակի, իր հանդեպ պարտքը նախ և առաջ ենթադրում է իր գոյությունը պահպանելու պարտականություն, որի համար նա հոգ է տանում իր կենսական կարիքների համար՝ սնվում է, հագնվում, տուն կառուցում, հետևում է առողջությանը և այլն: Այստեղ գործում է բնության ինքնապահպանության մղումը կամ մարդու ինքնապաշտպանության բնագործ: Մարդու այս պարտքին հակադրվում են ինքնասպանությունը, ինքնախոշտանգումների միջոցով կամ այլ եղանակներով սեփական մարմնական կամ առողջության վնասներ հասցնելու հանգեցնող արատները և գործողությունները: Սրանց մեջ պետք է մտցնել նաև սննդի և ակոհոլի չափից ավելի օգտագործումը, հաշիշամոլությունը և այլն: Իսկապես, հարբեցողությունը և շատակերությունը որոշ ժամանակով մարդուն զրկում են նրան հատուկ շարժունակությունից, իսկ հաշիշամոլությունը մարդու ֆիզիկական որակները կազմալուծում է աստիճանաբար, բայց հետևողականորեն ու վերջնականապես: Հետևապես, նշված գործողությունները հակասում են մարդու՝ որպես կենդանի էակ իր հանդեպ պարտքին:

Մաթեմատիկայի դասավանդման գործընթացը մարդուն մղում է ինտելեկտով գործողությունների, ինչը կարող է խոչընդոտ լինել մարմնական հաճույքների, նաև՝ հարբեցողության և շատակերության համար³:

Այն նպաստում է նաև սովորողների կամքի կոփման, ինտելեկտուալ ազատության, խոհեմության և զգուշավորության հատկանիշների ձևավորմանը, որակներ, որոնք խոչընդոտում են ընկնելու ուրիշների ազդեցության տակ: Իսկ հաշիշամոլությունը հիմնականում նման ազդեցությունների արդյունք է: Հետևապես, վստահորեն կարելի է ասել, որ մաթեմատիկայի դասավանդման գործընթացը մեծապես նպաստում է հաշիշամոլության և նման այլ արատների կանխմանը և այս կողմով ծառայում է մարդու՝ որպես կենդանի էակի, իր հանդեպ պարտքի կատարմանը: Միևնույն ժամանակ մտավոր երկարատև աշխատանքը, երևակայական աշխարհի հետ գործունենալը, որ հատուկ են մաթեմատիկայի դասավանդման գործընթացին, միտված են մարդուն հեռու պահել բնության և մարդկանց հետ շփումներից, այսինքն՝ մարդու բնական էությունից, ինչը ոչ միայն կարող է հանգեցնել առանձին հիվանդությունների, այլև հակասում է մարդու՝ որպես կենդանի էակի, իր հանդեպ պարտքին:

Հարկ է նկատել, որ ինտելեկտուալ կարողությունների մեծացումը խոչընդոտում է ամուսնության գործընթացին: Պատահական չէ, որ կրթություն ստացած մարդիկ ուշ են ամուսնանում, իսկ գիտությամբ զբաղվող կամ ինտելեկտուալ այլ զբաղմունքի մարդիկ շատ ավելի ուշ են ամուսնանում կամ ընդհանրապես չեն ամուսնանում: Հետևապես, պետք է ենթադրել, որ մաթեմատիկայի դասավանդման գործընթացը, մեծացնելով մարդու ինտելեկտուալ կարողությունները, չի նպաստում կամ խոչընդոտում է նրա՝ տեսակի պահպանմանն ուղղված պարտքի կատարմանը: Այդ պարտքի կատարմանը խոչընդոտում է նաև մարդկանց հետ շփումների սակավությունը, որ ենթադրում է մաթեմատիկայի ուսուցման գործընթացը:

Ըստ Կանտի, մարդու՝ որպես հոգևոր էակի, ինքն իր հանդեպ ունեցած պարտքն է իր հոգևոր, հոգեկան և մարմնական ուժերի զարգացումը՝ որպես միջոց զանազան նպատակների իրականացման համար:

³ Զ. Ա. Լիբայելյան, Բարոյական սովորները և մաթեմատիկայի դասավանդման գործընթացը, կյանքի իմաստը, Անկախություն ուն, N 7, 2010, էջ՝ 30:

Հոգևոր ուժերի ցանկում Կանտր առաջին հերթին նշում է մաթեմատիկայի առկայությունը:

Մաթեմատիկայի ուսուցման գործընթացի հիմնական նպատակներից մեկը մաթեմատիկական փաստերի և մեթոդների յուրացումն է, ինչը նպատակաուղղված է հոգևոր ուժերի զարգացմանը:

Մաթեմատիկայի ուսումնական ծրագրերը ներառում են ձևական տրամաբանության մի շարք կարևորագույն և առանցքային հարցեր, որոնք նույնպես կազմում է հոգևոր ուժերի մաս, իսկ դրանց ուսուցումը նպաստում է հոգևոր ուժերի զարգացմանը:

Գիտության այլ բնագավառներում, ժամանակակից տեխնիկայի մեջ ունեցած կիրառություններով նույնպես մաթեմատիկական և նրա ուսուցման գործընթացը նպաստում են մարդու հոգևոր ուժերի զարգացմանը:

Մաթեմատիկական լայն կիրառություն ունի ճարտարապետության, քանդակագործության, նկարչության և արվեստի այլ բնագավառներում, ինչը նույնպես նրա ուսուցումը դարձնում է մարդու հոգևոր ուժերի զարգացման կարևոր միջոց⁴:

Մաթեմատիկայի դասավանդման գործընթացը կարևոր դեր ունի մտածողության, երևակայության, հիշողության, ուշադրության և հոգեկան այլ ուժերի ձևավորման և զարգացման գործում: Իսկ մարմնական ուժերի զարգացմանը մաթեմատիկայի ուսուցման գործընթացը հազիվ թե կարողանա նպաստել, այն հավանաբար խոչընդոտում է այդ ուժերի զարգացմանը:

Ինչպես արդեն նշվել է, մաթեմատիկայի դասավանդման գործընթացը մեծացնում է մարդու վերլուծական կարողականությունները, ինչը, իր հերթին, հնարավորություն է տալիս ճիշտ գնահատել և քննադատաբար վերաբերվել սեփական գործողություններին, ունենալ կայուն համոզմունքներ և չչեղվել դրանցից: Բնականաբար՝ այս ամենը կնպաստեն այն բանին, որ մարդու խիղճը լինի մաքուր:

Հանրահայտ է մաթեմատիկական կրթության դերը սովորողների մտածողության ձևավորման և զարգացման գործընթացում: Եվ քանի որ մտածողությունը կազմում է

⁴ Զ. Ա. Կիբայելյան, Գեղեցիկը, մաթեմատիկական և կրթության ուսուցումը: Ասա II: Գեղեցիկը և մաթեմատիկայի կրթությունը մասնագիտացված ուսուցումում: Զ. Ա. Կիբայելյան եր.: Էդիթ Գրիստ, 2015, էջ՝ 108:

բանականության հիմքը, ապա հաջողությունը մաթեմատիկայի դասավանդման գործընթացում մեծացնում է սովորողի հարգանքը իր նկատմամբ:

Իսկ եթե աշակերտը չի կարողանում յուրացնել նյութը, լուծել առաջադրված խնդիրներն ու վարժությունները, ապա նրա մոտ ոչ միայն չի ձևավորվում սեփական արժանապատվության գիտակցում, այլև ընդհակառակը՝ նա նսեմանում է իր աչքում: Նկատի ունենալով սա, անհրաժեշտ է դպրոցական դասագրքերում ընդգրկել նաև շատ պարզ խնդիրներ, որոնք մատչելի են թույլ աշակերտների համար: Դասագրքային խնդիրների լուծման մեկ-երկու հաջող փորձը կարող է նման աշակերտին բարձրացնել իր աչքում և նպաստել սեփական արժանապատվության նկատմամբ հարգանքի ձևավորմանը:

Կանտը առանձնացնում է ուրիշի նկատմամբ մարդու պարտականությունների երկու տեսակ:

Պարտականությունների առաջին տեսակի կատարումը համարվում է ծառայություն, որով նաև պարտականություն է դրվում ուրիշների վրա: Նման պարտականությունների կատարմանը ուղեկցում է սիրո զգացմունքը. Պարտականությունների երկրորդ տեսակի կատարումը ուրիշների վրա պարտականություն չի դնում, այն պարտք է, որ հետևում է պարտավորությունից: Նման պարտականությունների կատարմանն էլ ուղեկցում է հարգանքի զգացմունքը. Ուսուցչի՝ աշակերտին ցույց տրվող օգնությունը նրա պարտականությունն է, որ բխում է իր պարտավորություններից և, հետևապես, այն աշակերտի վրա պարտականություն չի դնում: Ուսուցչի այս աշխատանքը արժանի է հարգանքի: Իսկ ընկերոջ կողմից աշակերտին ցույց տրվող օգնությունը սիրո զգացմունքի դրսևորում է, որովհետև չի բխում աշակերտի նկատմամբ նրա պարտավորությունից: Նման օգնությունը ենթադրում է նաև պարտավորության ստանձնում օգնվողի կողմից:

Չնայած սերը և հարգանքը կարող են գոյություն ունենալ և գնահատվել իրարից անկախ (հարգանքի արժանի մեկին հնարավոր է չսիրել կամ շատ սիրելի մեկը կարող է հարգանքի արժանի չլինել), սակայն այդ երկու զգացմունքները հանդես են գալիս միասնաբար⁵:

⁵ Զ. Ա. Կիքայ Ելյան, Գեղեցիկը, մաթեմատիկան և կրթությունը. Ասա II: Գեղեցիկը և մաթեմատիկայի կրթությունը և ներուժը/ Զ. Ա. Կիքայ Ելյան եր.: Էդիթ Դրինտ, 2015, էջ՝ 109:

Օրինակ, երեխայի նկատմամբ պարտականությունների կատարումը բխում է ծնողի պարտավորություններից և կարող է գնահատվել հարգանքով: Նման պարտականությունների կատարումը երեխայի վրա փոխադարձ պարտականություններ չի դնում: Սակայն այդ պարտականությունների կատարումը, սովորաբար, ուղեկցվում է այնպիսի գործողություններով, որոնք չեն բխում ծնողական պարտավորություններից և ուղեկցվում են սիրո զգացմունքով, մայրը ոչ միայն ճաշ է պատրաստում, այլ համով ճաշ է պատրաստում, աղջկա համար ոչ միայն շոր է գնում, այլ գեղեցիկ շոր է գնում, իր երեխային ոչ միայն պառկեցնում է քնելու, այլև հեքիաթ է պատմում, օրօրոցային երգում և այլն, և այլն:

Նման՝ լրացուցիչ գործողությունները, որ մայրական սիրո դրսևորումներ են, առաջացնում են երեխայի մոտ փոխադարձ սիրո զգացմունքներ և ենթադրում նաև փոխադարձ՝ որդիական պարտականություններ: Այդպիսին է պատկերը նաև ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում: Իրականում սիրո և հարգանքի միասնականությունը ավելի խորը դրսևորում ունի: Այնպես, ինչպես ֆիզիկական աշխարհում մարմինները հավասարակշռության մեջ են գտնվում ձգողական և վանողական ուժերի հավասարակշռության շնորհիվ, բարոյական աշխարհում նույնպես մարդկանց միջև բարոյական կապը իրականացվում է ձգողական և վանողական ուժերի հավասարակշռության միջոցով:

Փոխադարձ սիրո սկզբունքը մարդկանց ձգում է, մոտեցնում իրար, իսկ փոխադարձ հարգանքի սկզբունքը՝ նրանց հեռացնում, պահում է որոշ հեռավորության վրա:

Եվ բարոյական աշխարհի ներդաշնակությունը, մարդկանց միջև բարոյական ներդաշնակությունը ստացվում է այդ ձգողական ու վանողական ուժերի հավասարակշռության արդյունքում:

Մաթեմատիկայի դերը շրջակա աշխարհի ուսումնասիրության, մարդու հոգեկան աշխարհի զարգացման գործում, կիրառական հսկայական նշանակությունը մաթեմատիկական կրթություն ստացած մարդուն դարձնում են ցանկալի՝ ինչպես գործնական, այնպես էլ հոգևոր խնդիրների քննարկման և իրականացման տեսակետից: Այդ պատճառով, մաթեմատիկական կրթությունը մեծացնում է ուրիշների կողմից սիրված լինելու հնարավորությունները: Մյուս կողմից,

մաթեմատիկայի իմացությունը մեծացնում է նրա նկատմամբ մարդկանց հարգանքի զգացմունքը: Հետևապես, մաթեմատիկական կրթությունը նպաստում է մարդկանց միջև բարոյական ներդաշնակության հաստատմանը:

Մաթեմատիկայի դասավանդման գործընթացը կարիք ունի ուղղորդվելու դեպի մարդկանց մարդասիրական պարտքի իրականացում, ինչին կարող է խանգարել այդ գործընթացում մարդկանց մտավոր գործունեության համար անհավասար պայմանների ստեղծումը:

Մաթեմատիկայի դասապրոցեսի ողջ ընթացքում՝ տնային աշխատանքների կատարում, դասի պատասխանում, նոր դասը հասկանալ, դասարանում առաջադրված խնդիրը կամ վարժությունը լուծել, ուսուցչի ուշադրությանը արժանանալ, սեփական շահը դիտարկվում է որպես հիմնական բարիք և նպատակ, ինչը նպաստում է էգոիզմի ձևավորմանը և ամրապնդմանը:

Հետևապես, այստեղ մեծ նշանակություն ունի դասապրոցեսի կազմակերպումը: Երբ դասը վեր է ածվում զուտ մաթեմատիկայի ուսուցման, որտեղ ի ցույց են տրվում, երևում և համեմատվում աշակերտների մաթեմատիկական ընդունակությունները, և գլուխ է բարձրացնում մրցակցային տարրը, էգոիզմը պարարտ հող է գտնում զարգանալու:

Դրա դեմ պայքարելու համար նպատակահարմար է, օրինակ, ուսուցման մեջ օգտագործել համագործակցային մեթոդը, որտեղ դասընկերոջ ստացած արդյունքը օգտագործվում է, համադրվում աշակերտի ստացած արդյունքի հետ և լուծումը ստացվում է համատեղ ջանքերի միջոցով: Այս դեպքում ավելի մեծ տեղ կարող է ստանալ ալտրուիզմը:

Մաթեմատիկայի դասավանդման գործընթացը հղի է ուրիշների հանդեպ հարգանքի պարտքին հակասող արատների՝ մեծամտության, ծաղրանքի և չարախոսության դրսևորման վտանգներով: Գաղտնիք չէ, որ մաթեմատիկայից առանձնապես առաջադիմող աշակերտների մեծ մասը հակված է իր մաթեմատիկական ունակությունները հիմք ընդունելով, իրեն ուրիշներից բարձր դասել⁶:

⁶ Զ. Ա. Կիբայ Ելյան, Գեղեցիկը, մաթեմատիկական և կրթության ունևոր. Ասա II: Գեղեցիկը և մաթեմատիկայի կրթությունը անևերուժը/ Զ. Ա. Կիբայ Ելյան Եր.: Էդիթ Դրինտ, 2015, էջ՝ 114:

Իրերի նման ընթացքը արդյունք է նաև մաթեմատիկայի դասավանդման գործընթացը մաթեմատիկական նյութի ուսուցման հանգեցնելուն, ինչի վնասակարության մասին արդեն խոսվել է: Նման ուսուցման ընթացքում առաջ եկած մրցակցությունը ի հայտ է բերում և ի ցույց է դնում աշակերտների մի մասի մաթեմատիկական ունակությունները, որոնք այստեղ դառնալով նման մրցության հաղթողներ, իրենց ուրիշներից բարձր դասելու և, հետևապես, մեծամտության պատճառ և առիթ են ձեռք բերում:

Իհարկե, մրցակցության գործոնը ուսուցման կազմակերպման դաս-դասարանային եղանակի պայմաններում անհնար է բացառել: Սակայն ուսուցիչը պետք է աշխատի նվազագույնի հասցնել այն: Իսկ աշակերտների մաթեմատիկական ունակություններն էլ պետք է նպատակաուղղել ոչ թե ուրիշների նկատմամբ իրեն բարձր դասելու, այլ իր արժանապատվությունը ոչ մի կերպ չնվաստացնելու նպատակին, միաժամանակ թույլ չտալով ուրիշների արժանապատվության նսեմացման դրսևորում:

Դրանով մաթեմատիկայից առաջադիմող աշակերտի մոտ կարող է ձևավորվել ոչ թե մեծամտության արատը, այլ հպարտության առաքինությունը: Մաթեմատիկայի դասավանդման գործընթացում ծաղրանքի վտանգի կարող են ենթարկվել առանձնապես այն աշակերտները, որոնք մաթեմատիկական ունակություններ չեն ցուցաբերում:

Այստեղ այդ արատը վտանգավոր է հետևյալ պատճառով: Դասը պատասխանելուց, խնդիրը կամ վարժությունը լուծելուց հնարավոր սխալներ թույլ տալու արդյունքում՝ դասընկերների կողմից ծաղրվելու վտանգը թույլ չի տալիս, կասեցնում է չառաջադիմող աշակերտների ներգրավումը ուսումնական գործընթացի մեջ: Եվ այս վտագավոր երևույթը հաղթահարելու համար նույնպես ուսուցչից պահանջվում է նրբանկատություն և հնարամտություն:

Ինչ վերաբերում է չարախոսությանը, ապա այն կարող է դրսևորվել ցանկացած ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում: Իսկ մաթեմատիկայի ուսուցման գործընթացը առանձնանում է միայն նրանով, որ այստեղ չարախոսությունը դրսևորման ավելի լայն հնարավորություններ ունի, որի

հիմնական պատճառ կարող են դառնալ չառաջադիմող աշակերտների անհաջողությունները և առաջադիմող աշակերտների նկատմամբ նախանձը⁷:

Նշված բոլոր արատների բացառումը, ինչպես արդեն նշվեց վերևում, հնարավոր է ուսուցչի հետևողական աշխատանքի արդյունքում: Այստեղ մենք, իհարկե, բացառում ենք ուսուցչի կողմից այնպիսի գործողությունների իրականացումը, որոնք իրենք են հանգեցնում այդ արատների ձևավորմանը: Դժբախտաբար, հանդիպում են նաև նման գործողություններ իրականացնող «ուսուցիչներ»:

⁷ Զ. Ա. Կիբայելյան, Գեղեցիկը, մաթեմատիկան և կրթությունը: Առա II: Գեղեցիկը և մաթեմատիկայի կրթությունը և ներուժը/ Զ. Ա. Կիբայելյան եր.: Էդիթ Դրինս, 2015, էջ՝ 116:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների հիմնական եզրահանգումներն են.

Երբ արժեքային հարաբերության օբյեկտը ներգործում է սուբյեկտի վրա, այդ ազդեցության տակ սուբյեկտը ձեռք է բերում որոշ կողմնորոշում կամ, ինչպես ընդունված է ասել, արժեքային կողմնորոշում: Տարբերում են անձնային և սոցիալական արժեքային կողմնորոշումները: Անձնային արժեքային կողմնորոշումը մարդու վարքը, գործունեությունը պայմանավորող կարևորագույն գործոն է, որոշ արժեքների նախապատվություն տալու և ընտրություն կատարելու հիմնական մեկնակետ: Ասվածից հետևում է անձնային արժեքային կողմնորոշվածության ուսումնասիրության կարևորությունը: Գոյություն ունեն ոչ մեծ թվով արժեքներ, որոնց նկատմամբ մարդու վերաբերմունքը վճռորոշ է նրա անձնային արժեքային կողմնորոշման համար: Նման արժեքները ընդունված է անվանել հիմնական կամ բազային:

Սոցիալ-արժեքային կողմնորոշումը մարդու դիրքորոշումն է արժեքներն ու ռեսուրսները իր կամ ուրիշի միջև բաշխելու հարցում, ինչը պայմանավորվում է նրանով, թե ինչ նշանակություն է տալիս, ինչքան է կարևորում մարդը ուրիշի հաջողությունները իր հաջողությունների համեմատությամբ:

Հանրակրթական դպրոցը սովորողների արժեքային կողմնորոշումների և արժեհամակարգի ձևավորման կարևորագույն օղակն է, ինչը պայմանավորված է դպրոցի դաստիարակչական նպատակների ընդհանուր բովանդակությամբ և ուսուցիչների դասընկերների և դպրոցական կյանքին մասնակից այլ անձանց հետ աշակերտի փոխհարաբերություններով:

Մաթեմատիկական կրթության շրջանակներում սովորողների մոտ կարող ենք ձևավորել այնպիսի արժեքներ, որոնց շնորհիվ նրանք կունենան դրական արժեքային կողմնորոշում: Օրինակ, եթե սովորողների մոտ ձևավորենք խղճի, ամոթի, փոխօգնության, արդարության, առաքինության բարոյական արժեքները, ապա դրանք կնպաստեն, որ նրանց մոտ ձևավորվի համագործակցային արժեքային կողմնորոշում:

Նշենք, որ մաթեմատիկայի ուսուցման գործընթացում ոչ միայն դրական որակներ կարելի է ձևավորել, այլ նաև բացասական (օր.՝ նախանձ), այդ ամենը կախված է ուսուցման գործընթացը կազմակերպողից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հ. Ս. Միքայելյան, Բարոյական արժեքները և մաթեմատիկայի ուսուցման գործընթացը, Բարին, չարը, արդարությունը, Մաթեմատիկական դպրոցում, N3, 2010,
2. Հ. Ս. Միքայելյան, Բարոյական արժեքները և մաթեմատիկայի դասավանդման գործընթացը, կյանքի իմաստը, Մանկավարժություն, N 7, 2010,
3. Հ. Ս. Միքայելյան, Գեղեցիկը, մաթեմատիկական և կրթությունը. Մաս II: Գեղեցիկը և մաթեմատիկայի կրթության ներուժը/ Հ. Ս. Միքայելյան Եր.: Էդիթ Պրինտ, 2015, 440 էջ: